

ERRIN-ի մասին

Աջակցություն միգրանտների վերադարձի և վերաինտեգրման միասնական մոտեցմանը

Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցը (European Return and Reintegration Network – ERRIN)

15 գործընկեր երկրների կոնսորցիում է, որը նպաստում է միգրանտների վերադարձին և վերաինտեգրմանը, ովքեր չեն կարող կամ այլևս չեն ցանկանում մնալ եվրոպայում: Ցանցը սպասարկում է կարիքների լայն շրջանակ՝ տրամադրելով խորհրդատվություն, ուղղորդում և վերաինտեգրման աջակցություն իրենց ծագման երկիր վերադարձող անձանց:

Ծրագրի շրջանակներում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ICMPD) հանդիսանում է պայմանագրային ծառայություն մատուցող՝ աջակցելու Հայաստանում վերաինտեգրման առաջին քայլերն անող կամավոր և ոչ կամավոր վերադարձողներին:

ERRIN-ը ֆինանսավորվում է Եվրամիության ապաստանի, միգրացիայի և ինտեգրման հիմնադրամի (AMIF) միջոցով՝ համաֆինանսավորվելով մասնակից ազգային գործակալությունների կողմից:

Իմացեք ավելին՝ www.returnnetwork.eu

ERRIN-ի գործընկեր երկրներ

Եվրոպական գործընկեր հաստատություններ

Ավստրիա	Ներքին գործերի դաշնային նախարարություն
Բելգիա	Ապաստան հայցողների ընդունման դաշնային գործակալություն/ Ներգաղթի դաշնային գրասենյակ
Գերմանիա	Ներքին գործերի, շինարարության և համայնքի դաշնային նախարարություն - Միգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակ
Հունիս	Ներգաղթի և ինտեգրման նախարարություն
Իսպանիա	Վշխատանքի, միգրացիայի և սոցիալական ապահովության նախարարություն - Միգրացիայի վարչություն
Լյուքսեմբուրգ	Արտաքին և եվրոպական գործերի նախարարություն
Ֆրանսիա	Ներքին գործերի և վարչական վերակառուցման նախարարություն
Մալթա	Ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն
Միացյալ թագավորություն	Ներքին գործերի նախարարություն
Տիլերանդներ	Արդարադատության և անվտանգության նախարարություն - Հայրենադարձության և վերադարձի ծառայություն
Նորվեգիա	Նորվեգիայի ներգաղթի վարչություն
Շվեյցարիա	Շվեյցարիայի միգրացիոն գործակալություն
Ֆինլանդիա	Միգրացիոն պետական քարտուղարություն
Ֆրանսիա	Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն
	Ներքին գործերի նախարարություն - Ներգաղթի և ինտեգրման գրասենյակ

ԿԱՊԿԵՔ ՄԵՉ ՀԵՏ

Վերաինտեգրման աջակցությունը տրամադրվում է Հայաստանի բոլոր քաղաքներում և շրջաններում՝ ERRIN ծրագրի շրջանակներում վերադարձողների համար:

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն – հայաստանյան գրասենյակ

Մենք այստեղ ենք ձեզ օգնելու համար:

Այցելության հասցե՝

Երևան 0037, Կարապետ Ուլենցու փողոց 31, # 310,

Աշխատանքային ժամեր՝

Երկուշաբթի - ուրբաթ
9:00-18:00
13:00-14:00՝ ընդմիջում



+374 060 27 50 20



Arpine.Vardikyan@
returnnetwork.eu

Eduard.Grigoryan@
returnnetwork.eu

Anush.Khanyan@
returnnetwork.eu



ERRIN-ի ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԴՈՒՔ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՔ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

Եթե դուք Հայաստանի քաղաքացի եք և ցանկանում կամ ստիպված եք վերադառնալ ERRIN-ի գործընկեր երկրից (հակառակ կողմի վրա նշված*), կարող եք համապատասխանել ծրագրի պահանջներին և օգտվել առաջարկվող աջակցությունից:

Վերադարձողները կարող են լինել ինչպես կամավոր, այնպես էլ՝ ոչ կամավոր, ամեն տարիքի և կենսագրության, և կարող են ներառել.

- Ապաստան հայցողների
- Մերժված ապաստան հայցողների
- Կանոնավոր և անկանոն միգրանտների
- Առանց ուղեկցողի անչափահասների
- Այլ խոցելի անձանց

Համապատասխանությունը որոշվում է գործընկեր երկրի պատասխանատու մարմինների կողմից: Վերաինտեգրման աջակցությունը կտրամադրվի միայն այդ մարմինների կողմից իրականացվող ստուգման դրական արդյունքի դեպքում: Աջակցությունը տրամադրվում է ծրագրի պահանջներին համապատասխանող վերադարձողներին՝ ERRIN-ի գործընկեր երկրից մեկնելուց 12 ամսվա ընթացքում:

ԻՆՉՊԻՍՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ

Դուք կարող եք դիմել կամ՝ նախքան մեկնումը՝ ERRIN-ի գործընկեր երկրում, կամ մեկնելուց հետո՝ Հայաստանում (կոնտակտները տրամադրված են): Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ ձեր սոցիալական աշխատողից կամ խորհրդատուից:

Ձեր վերաինտեգրման ծառայությունները կակտիվանան միայն ERRIN-ի գործընկեր երկրի հաստատումից հետո:

* Խնդրում ենք նկատի ունենալ, որ ցանցում գործող ոչ բոլոր գործընկեր երկրներն են կիրառում ներկայումս ERRIN-ի միջոցով Հայաստանում տրամադրվող վերաինտեգրման աջակցությունը: Սա կարող է փոփոխվել: Վերջին տեղեկությունների համար դիմեք ձեր խորհրդատուին:

ԻՆՉՊԻՍՐ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ Ե ՏՐԱՄԱԴԻՎԵԼ

Որպես ERRIN-ի ծրագրով վերադարձող անձ դուք կարող եք համապատասխանել Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի կողմից տրամադրվող մի շարք վերադարձի և վերաինտեգրման ծառայությունների, որոնք կօգնեն ձեզ սկսել, երբ վերադառնաք ձեր երկիր:

Ծառայությունները մատուցվում են ոչ դրամական ձևով (եթե այլ բան նշված չէ) և կարող են տարբեր լինել՝ կախված այն բանից, թե որտեղից եք գալիս, ձեր անձնական տվյալներից և հատուկ կարիքներից:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՐԵՏԱԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախքան մեկնումը

Եթե Ձեր հայտը հաստատվել է ERRIN-ի գործընկեր երկրի իշխանությունների կողմից, կարող եք տրամադրված կոնտակտներից տեղեկություն խնդրել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

Երբ ժամանեք

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը կարող է ձեզ առաջնային օգնություն տրամադրել Հայաստան ժամանելուց հետո:

Դուք պետք է հանդիպում նշանակեք տեղական խորհրդատուների հետ, և եթե համապատասխանում եք ծրագրի պահանջներին, անհատական վերաինտեգրման ծրագիր կմշակվի վերաինտեգրման աջակցություն տրամադրելու նպատակով:

Վերաինտեգրման ծառայություններ

Միգրացիոն ծառայությունում տեղակայված ծրագրի խորհրդատուները կաշխատեն ձեզ հետ՝ մշակելու հարմարեցված վերաինտեգրման ծրագիր՝ հաշվի առնելով ձեր իրավիճակը և կարիքները՝ հասանելի դրամաշնորհի գումարի շրջանակներում: Ծառայությունները կարող են ներառել.

- Վերաինտեգրմանը նպաստող խորհրդատվություն
- Առաջնային բժշկական օգնություն (ուղղորդումների միջոցով)
- Կարճաժամկետ բնակարանային աջակցություն
- Մասնագիտական զարգացում և մասնագիտական ուսուցում
- Փոքր բիզնես ձեռնարկելու աջակցություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը (ICMPD) միջազգային կազմակերպություն է, որն ունի 17 անդամ պետություն և մոտ 300 աշխատակից: Հիմնադրված լինելով 1993 թվականին՝ ՄԵՄՄԿ-ն ՄԱԿ-ի դիտորդի կարգավիճակ ունի և համագործակցում է ավելի քան 200 գործընկերոջ այդ թվում՝ ԵՄ կառույցների և ՄԱԿ-ի գործակալությունների հետ:

Ակտիվ լինելով աշխարհի ավելի քան 90 երկրներում՝ ՄԵՄՄԿ-ն իր աշխատանքում տարածաշրջանային մոտեցում է ցուցաբերում միգրացիոն ուղիներով արդյունավետ համագործակցություն և գործընկերություն ստեղծելու համար: Միգրացիայի կառավարման իր եռակողմ մոտեցումը, կառուցվածքային առումով փոխկապակցվելով հետազոտությունները, միգրացիայի շուրջ երկխոսությունները և կարողությունների զարգացումը, նպաստում է ամբողջ աշխարհում ավելի լավ միգրացիոն քաղաքականության մշակմանը:

Վիեննայում գտնվող կազմակերպությունն առաքելություն ունի Բրյուսելում, Մալթայի տարածաշրջանային գրասենյակում և մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

ՄԵՄՄԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունը, համագործակցելով Հայաստանի միգրացիոն ծառայության հետ, իրականացնում է «Միգրանտների վերադարձ և վերաինտեգրում» ERRIN-Հայաստան ծրագիրը: